

ՀՀ ԳԱԱ-ի աջակցությամբ նոր գիտական ուղղություններ կկարգանան Արցախում

Սույն թվականի օգոստոսի 16-17-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղամյան Արցախում հանդիպումներ ունեցավ Արցախի պետնախարար Արտակ Բեգլարյանի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանի և Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Անյուտա Սարգսյանի հետ: Զննարկեցին Արցախի գիտական կենտրոնի զարգացման և ուժեղացման հարցերը: ՀՀ ՊԱԱ գիտական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման հնարավորությունները:

Արցախի գիտական կենտրոնը ստեղծվել է ՀՀ ԳԱԱ ակտիվ մասնակցությամբ: Կենսատիեմոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ էկոլոգամոսֆերային հետազոտությունների կենտրոնի աջակցությամբ ստեղծվել են առաջին գիտական լաբորատորիաները Արցախում: «Կենսաբանական և քիմիական ուղղություններով լաբորատորիաների հիմնական աշխատանքներն ուղղված են կենսատիեմոլոգիական հետազոտություններին: Լաբորատորիաները գործում են մաս ՀՀ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող թեմատիկ ծրագրերի շնորհիվ: Համա-

գործակցության շրջանակներում արդեն ութ գիտությունների թեկնածու են պատրաստել, ովքեր այսօր կենտրոնում աշխատում են»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Ստյամբը: Նա կարևորեց, որ Արցախի գիտական կենտրոնում իրականացվող հետազոտական աշխատանքների արդյունքներն աստիճանաբար ուղղվում են դեպի ապրանքային ազուցում, ինչը շատ կարևոր է Արցախի տնտեսության զարգացման և նոր տեխնոլոգիաների ներդրման համար: «Սինչև այս

տարվա վերջ կենտրոնը կտա իր առաջին արտադրանքը՝ «Նարինե պլուս» կաթնաթթվային մթերքը՝ արտադրված հենց Արցախի բնական աղբյուրներից անջատված կաթնաթթվային շտամների հիմքի վրա: 33 ՂԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտարտադրական կենտրոնի կողմից տրամադրվող տեխնոլոգիական սարքավորումների կիրառմամբ կկազմակերպվի փորձաքանակ արտադրություն, որը լիպիդե բյուրեղավոր ամրոցը Արցախի պահանջարկը»,- ասաց

Աշոտ Սադյանը:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են ՀՀ զԱԱ-ի ինստիտուտների աջակցությամբ Արցախի գիտական կենտրոնում նոր գիտական ուղղություններով լաբորատորիաների ստեղծման հնարավորությունները: Նախատեսվում է ստեղծել երկրաբանության, ռադիոֆիզիկայի, ֆիզիոլոգիայի, աստղաբանության ուղղություններով նոր գիտական խմբեր կամ լաբորատորիաներ:

«Այն գիտական ուղղությունները, որոնք ընտրվում են Արցախի գիտական կենտրոնի համար, բխում են Արցախի տնտեսության զարգացման հեռանկարներից՝ գյուղատնտեսության, ռազմական պաշտպանության համակարգի ամրապնդման և այլ հարցերի հետ կապված»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը:

ՀՀ ՔԱՍ նախագահի Աշոտ Սարյանի և Արցախի պետնախարար Արտակ Բեգլարյանի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել փոխադարձ այցեր կազմակերպել ՀՀ ՔԱՍ ինստիտուտներ և Արցախի գիտական կենտրոնի հետուսաց ծրագրերի մշակման և համագործակցության ընդլայնման համար:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-
վերլուծական ծառայություն**



ԸՇ ԳԱԱ նախագահ Աշոտ Սադյանը և Հայաստանում Բուլղարիայի դեսպան Կալին Անաստասովը քննարկեցին գիտական համագործակցության հեռանկարները



Սույն թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարյանն ընդունեց Հայաստանում Բուլղարիայի արտակարգ և լիազոր դեսպան Կալին Անաստասովին: Հանդիպման ժամանակ քննարկվեցին ՀՀ ԳԱԱ-ի և Բուլղարիայի գիտությունների ազգային ակադեմիայի համաժողովածու

ցության հեռանկարները, զարգացման ուղիները, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող գիտական ոլորտները:

Ակադեմիկոս Աշոտ Սադյանն ասաց, որ անդրաժեշտ է ոչ միայն վերականգնել նախկինում ունեցած գիտական կապերը, այլև նաև համագործակցությունը հասցնել նոր, ավելի բարձր մակարդակի՝ հաշվի առնելով

գիտության նկատմամբ մոր պահանջները: Նա նշեց համատեղ իրականացվող հաջողված ծրագրերը ինֆորմատիկայի, աստղագիտության, երկրաբանության ոլորտներում և ընդգծեց ժամանակակից տեխնոլոգիաների ոլորտում համագործակցությունը ընդլայնելու ամիսածաշուրջում:

«Գլխավոր նարտահարավներն են ժամանակաշրջանում շատ կարևոր է գիտական ակտիվ համագործակցությունը ՀՀ ԳԱԱ-ի և Բուլղարիայի ազգային ակադեմիայի ինստիտուտների միջև, ինֆորմացիայի և փորձի փոխանակումը, համատեղ ծրագրերի իրականացումը Եվրոպական միության համագործակցության շրջանակներում», - նշեց Աշոտ Սալաման:

Դեսպանը կալին Ամաստասովը նշեց պատանկան կապերը Յայաստանի և Բուլղարիայի ժողովուրդների միջև: Ըստ նրա՝ այս ղեկարին ժամանակներուն անհրաժեշտ

է բարձրացնել երիտասարդության շրջանում գիտության նկատմամբ հետաքրքրվածությունը: «Անհրաժեշտ է զարգացնել համագործակցությունը երիտասարդ գիտնականների միջև, որպեսզի նրանք հնարավորություն ունենան ինքնակայանալու և ամրապնդելու իրենց ապագան գիտության մեջ»,- ասաց Կալին Ամաստատուր:

Քննարկվեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Բուլղարիայի գիտությունների ազգային ակադեմիայի միջև համատեղ հուշագիր ստորագրելու հնարավորությունը, ինչի համար ՀՀ ՊԱՄ նախագահ Աշոտ Սաղյանը և ղեսպան Կալին Ամաստսոսովը խոստացան ներդնել բոլոր ջանքերը:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-
վերլուծական ծառայություն**



ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի սույն թվականի օգոստոսի 16-ի հրամանով Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, նշանավոր սրտաբան-վիրաբույժ Բագրատ Ալեքսանյը պարգևատրվել է Ալեքսանդր Նևսկու շքանշանով՝ կորոնավիրուսային վարակի դեմ պայքարում ունեցած ներդրման իսկյան:

Բագրատ Ալեքյանը համաշխարհային

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հրամանով ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Բագրատ Ալեքյանը պարգևատրվել է Ալեքսանդր Նևսկու շքանշանով

Ճանաչումն ունեցող մասնագետն է: Նա Ռուսաստանի առողջապահության նախարարության գլխավոր մասնագետն է Էնդոկրակուլյար փսիտորոշման և բուժման գծով: Նա Ռուսաստանի առողջապահական համակարգում բազմաթիվ պատասխանատու պաշտոններ է զբաղեցնում: 1975 թվականից աշխատում է Մոսկվայի սրտանոթային վիրաբուժության գիտական կենտրոնում: 1992 թվականից զբաղեցրել է ռեմոգենավիրաբուժական եղանակներով սրտի և արյան անոթների հետազոտման և բուժման բաժանմունքի վարիչի պաշտոնը, 1999 թվականից՝ ՌԴ սրտանոթային վիրաբույժների ընկերակցության ներանոթային վիրաբույժների բաժանմունքի նախագահի պաշտոնը: Բազմաթու Լիբերյան ՌԴ առողջապահության

հիւթյան նախարարության և Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի նախագահության ներանոթային վիրաբուժության հիմնախնդրային հանձնաժողովի նախագահն է, 2002 թվականից՝ ճառագայթաբանների և ներանոթային վիրաբույժների գիտական ընկերության նախագահը, Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի Ա. Բ. Բակուլևի անվան սրտանոթային վիրաբուժության գիտական կենտրոնի Կ. Բ. Բուրակովսկու անվան կարդիո-վիրաբուժության ինստիտուտի սրտի և անոթների հիվանդությունների հետազոտման և բուժման ռեմոգենավիրաբուժական մեթոդների բաժանմունքի ղեկավարը:

Բագրատ Ալեքյանն ավելի քան 700 գիտական աշխատության՝ այդ թվում 11 մե-

Նագորթյան և գրքի հեղինակ է: Նրա աշխատությունները վերաբերում են սրտի և արյան անոթների ներանոթային ախտորոշման և բուժման հարցերին: Իր գիտական մշակումների և դրանք կիրառության մեջ դնելու համար Բագրատ Ավետյանը 2015 թվականին արժանացել է ՌԻ կառավարության գիտության և տեխնիկայի բնագավառի մրցանակի:

Երևանի «Էրեբունի» բժշկական կենտրոնի անգիոգրաֆիկ ծառայությունն անվանակոչվել է Բագրատ Ալեքյանի անունով:

ՀՀ ԳԱԱ նախագահության անդամները շնորհավորում են մեծանուն գիտնականին և բժշկին, մաղթում նորամոր գիտական հաջողություններ:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-
վերլուծական ծառայություն**

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում ընդունեցին Արցախյան 44-օրյա պատերազմի զոհվածների հարազատներին

Ս.թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հյուրընկալեց Արցախյան 44-օրյա պատերազմի զոհվածների հարազատներին՝ մայրերին, կանանց, քույրերին, եղբայրներին, երեխաներին: Հանդիպման նախաձեռնողը «Իրավաբանների և հոգեբանների միջազգային ասոցիացիա» իրավական ՖԿ-ի նախագահ Խաչատուր Մարոգյանն էր: «Գիտությունների ազգային ակադեմիայում պատերազմի զոհվածների հարազատների հետ այս հանդիպումը հիմք կդառնա ստեղծելու այնպիսի մթնոլորտ, որտեղ կլինի համերաշխություն, սեր ու հարգանք: Գի-

տությունը ուղղորդիչ, շատ մեծ նշանակություն ունեցող կատեգորիա է: Գիտական համայնքը պետք է հասարակության առողջացման, զարգացման լուրմոտիվի դեր ստանձնի», - իր ողջույնի խոսքում ասաց Խաչատուր Մարոգյանը:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարգսյանը իր ցավակցությունները հայտնեց պատերազմի զոհվածների հարազատներին և ցավով նշեց, որ պատերազմը խլեց պետության սերունդը՝ երիտասարդներին: «Մենք մեծ կուրուստ ենք ունեցել, և դա միշտ պետք է պահենք մեր

սրտերում: Մենք պետք է փորձենք համախմբվել և հզորանալ հանուն մեր հերոսների, ովքեր իրենց կյանքն են տվել, ովքեր պետք է լինեին կանգնած մեր երկրի հիմքում», - ասաց Աշոտ Սարգսյանը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը իր խոսքում ասաց. «Մեզ՝ պատմաբաններիս համար շատ դժվար է այս ամբողջը հանձնել թղթին: Մենք խոստանում ենք մեր հերոսների մայրերին, քույրերին, բոլոր հարազատներին հնարավորինս վեր հանել ձեր զավակների հերոսապատումը»:

Հանդիպման ժամանակ ներկայացվե-

ցին պատերազմին նվիրված «Հայացք դեպի երկինք» վավերագրական ֆիլմի եզրափակիչ նկարահանումները, իսկ ամբողջական ֆիլմը կցուցադրվի 2021 թ.-ի հոկտեմբեր ամսին:

«Ֆիլմի կարևորագույն նպատակներից մեկը երկնքին նայելն է, որպեսզի այն հնարավորությունը, որը տրված է մեզ ի վերուստ, մենք չկորցնենք: Մեր հաղթանակները մեր մեջ են», - ասաց ֆիլմի հեղինակ Խաչատուր Մարոգյանը:

«Իրավաբանների և հոգեբանների միջազգային ասոցիացիա» իրավական ՖԿ-ի կողմից պատերազմի զոհվածների հարազատներին պատվոգրեր հանձնվեցին:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի գիտական խումբը գրանցել է մի կարևոր արդյունք՝ արտմական միջավայրում օպտիկական տրանսմիսիայի օստիկական փոփոխությունների գրանցման առաջին դրսևորման վերաբերյալ




ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի գիտական խումբը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանի ղեկավարությամբ, ստացել է մի կարևոր գիտական արդյունք, որը թույլ է տալիս ավելի ճշգրիտ բնութագրել լույսատու ռեզոնանսային փոխազդեցությունը: Կիրառական առումով այս արդյունքը կարող է օգտագործվել անընդհատ լազերային ճառագայթման կոհերենտության և մեներանգուլյան աստիճանի որոշման համար:

Լազերային լույսի դաշտում ատոմը պարբերաբար կլանում և ճառագայթում է ֆոտոններ՝ անցնելով մեկ վիճակից մյուսին (այսպես կոչված «Ռաբիի տատանումներ»): Ատոմական միջավայրում (զազում, որտեղ ատոմների թիվը միլիոններ են) Ռաբիի տատանումներ կարող են գրանցվել լազերային դաշտի կտրուկ միացման պահին, որից հետո դրանք աստիճանաբար մարում են, և ձևավորվում է կայուն վիճակ (փոխազդեցության «ստացիոնար» ռեժիմ): Այդ ռեժիմն այսօր մանրամասն հետազոտված է, և այն բազ-

մաբնույթ արժեքավոր կիրառությունների հիմքում է:

«Կատարված էքսպերիմենտն առաջին հայացքից ծայրահեղ պարզ է. լազերային ճառագայթումն անցնում է ռուբիդիումի ատոմական գոլորշու միջով, և անցած լույսը գրանցվում է ֆոտոդիտուցիչով: Ստացիոնար պրոցեսները գրանցելու համար ավանդաբար օգտագործվում է դանդաղագործ ֆոտոդիտուցիչ, և ելքում գրանցվում է ժամանակի մեջ ամփոփու ազդանշան: Մենք այս խնդրի համար առաջին անգամ օգտագործել ենք գերարագագործ և զգայուն ֆոտոդիտուցիչ, որն ունակ է գրանցել ազդանշանի փոփոխությունները գերկարճ ժամանակում ($< 10^{-9}$ վայրկյան), և ամփոփու ազդանշանի փոխարեն ամմիջապես գրանցվել են ազդանշանի կտրուկ տատանումներ, որոնք առաջին հայացքից թվում են անկանոն: Տատանվող ազդանշանի վերլուծությունը «Ֆուրիեի արագ փոխակերպման» սարքով ցույց տվեց, որ տատանումների միջին հաճախությունը համապատասխանում է հենց լազերի տվյալ ինտենսիվությամբ համապատասխանող Ռաբիի հաճախությանը:

Արդյունքը թվում է զարմանալի, քանի որ գործ ունենք անընդհատ լազերային լույսի հետ: Այստեղ հարց է ծագում՝ իսկ որքանով անընդհատ է «անընդհատ» համարվող ճառագայթումը: Իրականում, ցանկացած լազեր կատարյալ չէ, դրա ճառագայթումը ենթակա է փոփոխության խզումների, որի արդյունքում մեներանգությունը որոշ չափով խախտվում է: Դա հաստատվեց փորձում: Օգտագործեցինք երկու տարբեր լազեր, և ազդանշանի տատանումներն ավելի մեծ էին ավելի մեծ սպեկտրալ լայնությանը լազերի դեպքում: Այսինքն՝ պարզ փորձարարա-



Ուղղակիորեն գրանցված ռուբիդիումի գոլորշու ռեզոնանսային բացթողման ազդանշանը (a) և համապատասխան Ֆուրիեի արագ փոխակերպման սպեկտրը (b): Կարմիր կորերը՝ միջինացված ազդանշաններն են:

Նկարն արտաբերված է A. Papoyan, S. Shmavonyan, *Signature of optical Rabi oscillations in transmission signal of atomic vapor under continuous-wave laser excitation*, *Optics Communications*, v.482, 126561 (2021) հոդվածից:

կան եղանակով հնարավոր է նաև բնութագրել լազերային ճառագայթման «որակը», - ասաց Արամ Պապոյանը:

Սկզբնական արդյունքը ստացվել է Արամ Պապոյանի և ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող Սվետլանա Շմավոնյանի կողմից: 2021 թ. ձեռնարկվել են երևույթը գերնեղ օպտիկական բջիջներում հետազոտելու աշխատանքներ, որոնց ներգրավվել են ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի երիտասարդ գիտաշխատող Արմեն Սարգսյանը և ինստիտուտում ինտերնատուրայի ծրագրով պատրաստվող Ֆրանսիայի Բուրգունդիա Ֆրանց-Կոնտե համալսարանի ուսանող Ռոդոֆ Մոմեն: Գիտափորձերը կշարունակվեն ֆրանսիացի ուսանողի Հայաստան հաջորդ այցելության ընթացքում՝ արդեն համատեղ ասպի-րանտի կարգավիճակով:

Հետազոտության արդյունքը տպագր-

վել է 2021 թ. հեղինակավոր միջազգային «Optics Communications» ամսագրում (ազդեցության գործակիցը՝ 2.125):

Առ այսօր այս գիտական արդյունքի վերաբերյալ դրական արձագանքներ են ստացվել ոչ լուրտի հեղինակավոր մասնագետներ Ի. Նովիկովայից (ԱՄՆ), Չ. Ադամսից (Մեծ Բրիտանիա), Դ. Բուդկերից (Գերմանիա), Ա. Ակուլչինից (Ավստրալիա), Մ. Աուզինզից (Լատվիա):

Հետազոտությունը կատարվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող 18T-1C234 - «Ալկալի մետաղների գոլորշիներում ատոմային բնակեցումների ղեկավարումը ռեզոնանսային փոխազդեցության ոչ ստացիոնար ռեժիմում» նախագծի շրջանակներում (2018-2020 թթ.):


ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԿԱՌՈՒՑՎԵԼ Է ԲԱՐՁՐԱՎՈՆՏ ԷԼԵԿՏՐՈՆԱԴՈՐՄԱՆ ԳԻԾ ԱՐՑԱԽՈՒՄ

2020 թ. 44-օրյա պատերազմից առաջ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանը սնվում էր Շուշի-Կարմիր Շուկա-Մարտունի էլեկտրահաղորդման գծից: Պատերազմից հետո գծի զգալի մասը մնացել էր հակառակորդի վերահսկողության տակ:

Կառուցվել է Ստեփանակերտ-Մարտունի բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը, որի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 41 կիլոմետր, հզորությունը՝ մինչև 10 ՄՎտ: Ներկայումս Մարտունու ենթաշրջանը օգտագործում է մինչև երեք մեգավատտ հզորություն: Նախորդ ամիսների ընթացքում որպես ժամանակավոր լուծում 10 ԿՎ օղային գծով որոշ սահմանափակումներով էլեկտրական էներգիա է տրվել Մարտունու շրջանին:

Ամիրաթեշտ է նշել, որ մոտ 35 ԿՎ օղային գիծը կառուցվել է Ստեփանակերտից մինչև Մարտունի և շարունակվելու է մինչև Կարմիր շուկա ենթակայան: Բարձրավոլտ մոտ գծի կառուցման համար տեղադրվել է 443 հե-



«Թրի-1» հիդրոէլեկտրակայանի մեքենայական սրահը

մայուն: Աշխատանքները կատարվել են «Արցախէներգո» ՓԲԸ մասնագետների կողմից և միջոցներով: Ընդհանուր առմամբ կատարվել է մոտ 1,5 միլիարդ դրամի աշխատանք:

Մարտունին արդեն ունի գիշերային լուսավորություն: Առաջիկա օրերի ընթացքում Մարտունու մյուս բնակավայրերը նույնպես կունենան գիշերային լուսավորութ-

յուն: Նորոգվել է նաև Մարտունու 35/10 ԿՎ լարման ենթակայանը:

Հեմայունների տեղափոխման աշխատանքները անվտանգ ապահովելու համար՝ 2021 թ. հուլիսի 15-ին ժամը 10:00-ից՝ 17:00-ն անջատվելու է 35/10 ԿՎ «Մարտունի» ենթակայանից սնվող 10 ԿՎ «Գիշի» օղային գծի 3088 մյուլը, հոսանքազրկելով՝ Կաղարծի և Պառավաթունը համայնքները:

«Արցախէլեկ» բաց բաժնետիրական ընկերությունը 2017 թ.-ին արտադրել է 181 մՎտ էլեկտրաէներգիա: 2021 թ. նախնական էներգետիկ հաշվեկշիռով նախատեսված էր, որ ՀՀ-ն Արցախի Հանրապետությունից կներկրի 330 միլիոն կՎտ էլեկտրաէներգիա:

Հիշեցնենք, որ մինչև 1920 թվականը Արցախում չափազործվող միակ էլեկտրակայանն ուներ մոտ 30 ԿՎտ հզորություն և գտնվում էր Շուշի քաղաքի մոտ:

Ստեփան ՊԱՊՈԿՅԱՆ

Հայկական էներգետիկական ակադեմիայի իմնադիր նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Բարվից սկսած՝ ներկայիս Ադրբեջանի բոլոր փարածքները եղել են հայանուն, հայաբնակ ու հայկական. ակադեմիկոսը՝ Ալիևին

ԵՐԵՎԱՆ, 18 ՕԳՈՍՏՈՍԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությունները Հայաստանի տարածքների վերաբերյալ բացահայտ կեղծիք են և մանիպուլյացիա՝ տարածաշրջանը թուրքական-ադրբեջանական ներկայացնելու նպատակով: «Արմենպրես»-ի հետ զրույցում այս մասին ասաց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը՝ մեկնաբանելով Քարվաճառում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի արած հայտարարությունները Հայաստանի սուվերեն տարածքների՝ Սյունիքի, Սևանի և Վարդենիսի մասին:

Անդրադառնալով Ալիևի հորջորջանքներին՝ իբր Սյունիքը, Սևանը, Վարդենիսը, Երևանը «պատմական ադրբեջանական հողեր են», պատմաբանը նշեց, որ ներկայիս Ադրբեջան կոչվող հանրապետության տարածքը ոչ մի կապ չունի պատմական Ատրպատականի՝ Իրանի հյուսիսային շրջանների հետ, որից թուրքերը պարզապես գողացել են անվանումը՝ 1918 թ. այդ արևեստածին պետությունը ստեղծելիս: Եվ երկրորդ՝ մինչև 14-15-րդ դդ., երբ տարածաշրջանը ներթափանցեցին թուրքմենական ցեղերը, և առավել ևս՝ մինչև 11-րդ դ., երբ առաջին անգամ տարածաշրջանում հայտնվեցին սելջուկ-թուրքերը, մեր տարածաշրջանում՝ ներառյալ Արևելյան Հայաստանը, Վրաստանը, Արևելյան Անդրկովկասը և Հյուսիսային Իրանը, թուրքական որևէ տեղանվանման կամ թուրքական տարրի մասին խոսելը պարզապես ծծառելի է:

«Ուրեմն, Ադրբեջանի Բաբու մայրաքաղաքից սկսած՝ Ատրպատականի, Շաքիի, Շիրվանի, ամբողջ «Հայոց Արևելից Կողմանց», այսինքն՝ Մեծ Հայքի Ուտիք, Արցախ, Փայտակարան նահանգների տարածքները՝ բոլորը եղել են հայանուն և հայաբնակ ու հայկական, որտեղ խոսել թուրքական որևէ տարրի մասին մինչև 11-րդ դարը ուղղակի զավեշտ է», - ընդգծեց Աշոտ Մելքոնյանը:

Պատմության ինստիտուտի տնօրենն իր այս պնդումը հիմնավորում է պատմական այն հայտնի փաստերով, որ մինչև 14-15-րդ դդ., երբ Արևելյան Հայաստան և Արևելյան Անդրկովկաս ներթափանցեցին թուրքմենական ցեղերը, առավել ևս՝ մինչև 11-րդ դարը, երբ առաջին անգամ մեր տարածաշրջանում հայտնվեցին թուրքական ցեղերը՝ ի դեմս սելջուկ-թուրքերի, որևէ թուրքական տեղանուն այս տարածաշրջանում չի եղել:

«Հատուկենտ թուրքեր տարածաշր-



ջանում հայտնվել են միայն 9-րդ դարում, երբ արաբները վարժել են թուրք վարժական-գինվորականների, որոնց թվում էր, օրինակ, հայտնի գորավար Բուղան, որը 9-րդ դ. կեսերին արշավեց Հայաստանի շրջաններով՝ Վասպուրականով, Սյունիքով և Արցախով և ծանր պարտություն կրեց հատկապես Արցախում՝ Քիջ ամրոցում (854 թ.) Եսայի Աբու Մուսե իշխանից», - հավելեց մասնագետը:

«Ընդհանրապես Արևելյան Հայաստանի և Արևելյան Անդրկովկասի տեղանունների թուրքացման գործընթացը սկսվել է 14-15-րդ դդ., երբ թուրքմենական ցեղերն այստեղ հաստատեցին իրենց տիրապետությունը: Օրինակ, Հյուսիսային Իրանի տարածքի իրանախոս բնակչությունն աստիճանաբար դարձավ թուրքախոս: Թեպետ այդ թուրքախոս բնակչությունը էլ հետագայում՝ 15-րդ դարի վերջին, կյանքի կոչեց իրանական Սեֆյան պետությունը: Սեֆյանները, լինելով պարսիկ, թուրքախոս էին: Եվ, բնականաբար, այս երևույթը նկատվեց նաև Արևելյան Հայաստանի տարածքում: Բայց դա բացարձակապես չի նշանակում, թե դրանից առաջ այդ տեղանունները հայկական էին: 14-15-րդ դդ. առաջ, առավել ևս՝ 11-րդ դ. առաջ, որևէ թուրքական տեղանուն այս տարածաշրջանում չէիք կարող գտնել», - ասաց Մելքոնյանը:

Պատմաբանը նաև նկարագրեց, թե ինչպես է տեղի ունեցել տեղանունների թուրքացումը՝ նշված ժամանակաշրջանում՝ քոչվորներին հատուկ պարզունակ ոճով և նրանց ցածր մտավոր կարողություններին համապատասխան. «Թուրքերը ինչպես որ տեսնում էին տվյալ տա-

րածքը, այդպես էլ կոչում էին: Ասենք, եթե պոտոր ջուր էր լինում՝ «Կարա-Սու» էին անվանում, կամ երեք եկեղեցի էին տեսնում՝ դառնում էր «Ուշ Քիլիսե», տեսնում էին չորս եկեղեցի՝ դառնում էր «Դորթ Քիլիսե» և այդպես շարունակ»:

«Այնպես որ, այն, ինչ այսօր ասում է Ալիևը, բացահայտ կեղծիք է և մանիպուլյացիա՝ տարածաշրջանը թուրքական-ադրբեջանական ներկայացնելու նպատակով», - եզրակացնում է Աշոտ Մելքոնյանը:

Քաղաքակիրթ աշխարհը և այդ թվում՝ գիտական հանրությունը, պատմաբան Աշոտ Մելքոնյանի խոսքով, շատ լավ գիտի այդ ամենը և հասկանում է, որ ադրբեջանական պատմագրությունը ամբողջությամբ կեղծված է և իրական գիտության հետ որևէ կապ չունի: Բայց այլ հարց է, որ Ադրբեջանը, գործի դնելով իր ֆինանսական միջոցները, տարածում է այդ կեղծիքներն ամբողջ աշխարհով մեկ այն հաշվարկով, որ «եթե սուտը 100 անգամ կրկնես»՝ այն կարող է ճշմարտություն թվալ:

«Համեմայնդեպս, կարծում եմ, որ քաղաքակիրթ աշխարհի մեծագույն մասը, մասնավորապես նկատի ունեմ Եվրոպան, Միացյալ Նահանգները, Ռուսաստանը՝ իրենց մտավորական շրջաններով և մասնագիտական հանրություններով հանդերձ, շատ լավ գիտեն իրական պատմությունը: Երբ առիթ է ներկայանում, օրինակ՝ ռուսաստանցի մտավորականները, միշտ ասում են, որ ծիծառելի է խոսել ադրբեջանական հնագույն մշակույթի մասին, որովհետև դա չի՞նժու, թուրքացած իրանական էլենմների հիմքի

վրա Արևելյան Անդրկովկասում ստեղծված կեղծ մշակույթ է, էլ չեմ ասում՝ նաև քաղաքական հանրույթ՝ ի դեմս այսպես կոչված Ադրբեջանական Հանրապետության», - ընդգծեց զրուցակիցը:

Աշոտ Մելքոնյանի խոսքով՝ ադրբեջանցիները և Ադրբեջան կոչվող պետությունն այսօր ինքնության փնտրտուքի մեջ են, քանի որ գրգռվել են իրենց գրեթե բոլոր հարևանների՝ հայերի, վրացիների, լեզգիների, իրանցիների և նույնիսկ ցեղակից թուրքմենների պատմությունն ու մշակույթը: Եվ այդ խառնաշփոթն այն աստիճանի անհեթեթության է հասել, որ մի կողմից իրենց համարում են կովկասյան Աղվանքի ժառանգներ, այսինքն՝ տեղաբնիկներ, մի կողմից՝ հնդեվրոպական, մյուս կողմից էլ՝ թուրքալեզու, որովհետև արյունակից են միջինասիական ժողովուրդներին և օսմանյան թուրքերին:

Մեր հարցին՝ ո՞րն է ադրբեջանցիների ճիշտ ինքնանվանումը, պատմաբանը պատասխանեց՝ «կովկասյան թաթարներ»: Եվ ավելացրեց. «Թաթար» իմաստով նշանակում է «քոչվորներ»:

Ինչ վերաբերում է հարցի քաղաքական կողմին՝ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը կարծում է, որ ինչպես Ալիևի սանձարձակ հայտարարությունները «Ջանգեզուրի միջանցքի», Սևանի, Երևանի, հիմա էլ՝ Վարդենիսի մասին, այնպես էլ առհասարակ Ադրբեջանի ագրեսիվ և ռազմատենչ վարքագիծը սահմանին պայմանավորված են այն հանգամանքով, որ Թուրքիան և Ադրբեջանը, օգտվելով 44-օրյա պատերազմում արձանագրած հաջողություններից, կարծում են, թե հիմա ամենահարմար պահն է պանթուրիզմի ծրագիրը կյանքի կոչելու համար:

Սակայն Պատմության ինստիտուտի տնօրենը հանգել է այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետությունից բացի՝ տարածաշրջանում կան նաև այլ գործող ուժեր, մասնավորապես՝ Իրանը և Ռուսաստանը, որոնց ամենևին էլ ձեռնտու չէ այսպես կոչված «զանգեզուրյան միջանցքը»՝ անկախ նրանից, թե ինչ են դրա տակ հասկանում Բաբուն և Անկարան:

«1921 թ. հուլիսի կեսերին Ջանգեզուրից Գարեգին Նժդեհի հեռանալուց հետո խորհրդային պետության ձեռքը ոչ ոք չէր կարող բռնել, եթե նա որոշեր Ջանգեզուրը հանձնել Ադրբեջանին: Եթե չարեց, ուրեմն հասկանում էր, որ այդ հայկական սեպը պանթուրիզմի ճանապարհին ամենամեծ խոչընդոտն է», - եզրափակեց Աշոտ Մելքոնյանը:

Զորայրը վարեց Արամ ՍԱՐԳՍՅԱՆԸ

Հայաստանը համաշխարհային քարտեզի վրա խաղողի ծագման բնօրրան

Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի (ANSO) միակ դրամաշնորհը Հայաստանում 2021 թ. ստացել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը? «Խաղողի կենսաբանականության պահպանում և հարմարվողական հատկանիշերի մոբիլիզացիա» ծրագրի իրականացման համար:

Հայ-չինական այս ծրագիրն իրականացվում է Հիմնատանի «Մեկ գոտի-մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում, որն ուղղված է մարդկության առաջընթացի և համընդհանուր բարգավաճման համատեղ գործողություններին:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը ծրագիրն իրականացնում է Հիմնատանի գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի հետ: Ծրագրի երրորդ գործընկերն է Ֆրանսիայի լավա-

գույն գիտահետազոտական ինստիտուտներից՝ Institute of Grape and Wine Sciences (ISVV)-ը, որի հետ պլանավորված է 2022 թ. սկսել ՀՀ-ում խաղողի ֆիլոքսերայի լայնածավալ ուսումնասիրությունները: Վնասատուի գենոտիպավորումից մինչև մասնագետների վերապատրաստում:

Ծրագիրը կրում է կիրառական բնույթ և միտված է Հայաստանի խաղողի գենետիկական ռեսուրսների համապարփակ ուսումնասիրությանը, մասնավորապես հարմարվողական հատկանիշերի վերլուծությանը: Հիմնական նպատակը տեղածին սորտերում և վայրի խաղողի գենոմում չորադիմացկանությունը պայմանավորող գենների հայտնաբերումն է, որը չափազանց կարևոր է կլիմայի գլոբալ փոփոխության ենթատեքստում:


Հայաստանում խաղողի գենետիկական ռեսուրսների ուսումնասիրության մեկնարկը տրվել է դեռևս 2011 թ.: ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմի-



կոս-քարտուղար, Երևանի պետական համալսարանի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանի նախաձեռնությամբ: Ուսումնասիրություններն իրականացվել են

«ԱՍՏՈՒ ՆԵՐՇԵՉԱԼԵՔ: ՀԱՅ ԱՍՏՎԱԾԱՇԵՉԻ ԵՎ ԿՐԴՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԵԿՈՒ-ԿԵՍ ՀԱՋԱՐԱՄՅԱԿԸ» ԿԱՏԱԼՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԵՆ ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ Է

2019 թվականի մարտի 25-ից մայիսի 20-ը Բուդապեշտի Սեչենի անվան ազգային գրադարանում բացվել էր «Միութիւն եւ բազմազանութիւն» Հայկական Աստվածաշունչը եւ կրօնական աւանդութիւնը» խորագրով ցուցահանդէսը՝ Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի, Կյուլպենկյան հիմնադրամի, Բեռլինի պետական գրադարանի և Լայպցիգի Լայբնիցի անվան արևելյան երկրների մշակույթների և պատմական հետազոտությունների ինստիտուտի աջակցությամբ: Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուներից ցուցադրվեցին 1666-68 թթ. Ամստերդամում Ոսկան Երևանցու տպագրած հայերեն տպագիր առաջին Աստվածաշունչը և 1733 թ. Վենետիկում Մխիթար Սեբաստացու հրապարակած Աստվածաշունչը:



2020 թվականին տպագրվել է «Աստ-ծո ներշնչանք: Հայ Աստվածաշնչի եւ կրօնական պրակտիկայի մեկուկես հազարամյակը» (The One-and-a-Half Millennia of the Armenian Bible and Religious Practice) ցուցահանդեսի անգլերեն կատալոգը՝ գերմանաբնակ հայագետներ, Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Բալինտ Կովաչի և պատմական

գիտությունների թեկնածու Վահե Թաշյանի խմբագրությամբ:

Այն արդեն Հայաստանի ազգային գրադարանում է: Հատորը լրացվում է նույն թեմայի վերաբերյալ հոդվածների ժողովածուով: Տպագրության, մշակութային պատմության և աստվածաբանության տեսանկյունից հայկական Աստվածաշնչի վերլուծությունից և գնահատումից բացի, այն ներկայացնում է Հայ առաքելական, բողոքական և կաթոլիկ կրոնական հարստությունը, որը բնութագրում է Օսմանյան կայսրությունում հայերի կյանքը և Կարպատների հայ կաթոլիկ համայնքները: Աստվածաշնչյան ծեռագրերն ու մանրանկարները, որոնք ցուցադրվում են այս հատորում, արտացոլում են դեռևս 1600-ական թվականների հայ հասարակության մշակութային, լեզվական և կրոնական կյանքը:

Դոկտոր Բալինտ Կովաչը միաժամանակ Լայպցիգի Արևելյան Կենտրոնական Եվրոպայի պատմության և մշակույթի կենտրոնի ավագ գիտաշխատող է, որտեղ համակարգում է «Հայերն Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում» հետազոտական նախագիծը: Բուդապեշտում ուսանել է պատմություն, կաթոլիկ աստվա-

ծաբանություն և իրավունք: Հետաքրքրությունները ներառում են Արևելյան Եվրոպայի (հատկապես Տրանսիլվանիայի), Կովկասի և հայ սփյուռքի մշակութային պատմությունը: Կովաչը հրատարակել է «Հայ կաթոլիկ հավաքական արխիվներն Արմենոպոլիսում» (2012, համահեղինակ՝ Ռիտա Բեռնար, անգլերեն, ռումիներեն, հունգարերեն), «Եղիսաբեթուպոլիսի հայկական գրադարանի կատալոգ» (2012, համահեղինակներ՝ Արմենուհի Դրոս-Արգարյան, Տիբոր Մարտի, անգլերեն) և «Արարատից հեռու. հայ մշակույթը Կարպատյան ավազանում» (2013, համահեղինակ՝ Էմեսե Պալ, անգլերեն) հատորները:

Լիբանանում ծնված Վահե Թաշյանը պատմության և քաղաքակրթության գիտությունների թեկնածուի կոչման է արժանացել Փարիզի սոցիալական գիտությունների բարձրագույն դպրոցում: Նա Բեռլինում հիմնված «Հուշամատյան»



կայքէջի (www.houshamadyan.org) գլխավոր խմբագիրն է, մի գիտական նախագիծ, որի նպատակն է վերականգնել Օսմանյան կայսրության հայերի տեղական պատմությունը և նրանց հիշողությունները: Որպես հեղինակ և խմբագիր հրատարակել է «Ֆրանսիան Կիլիկիայում և Վերին Միջագետքում՝ Թուրքիայի, Սիրիայի և Իրաքի սահմաններին, 1919-1933 թվականներին» (2004, ֆրանսերեն), «Հայկական բարեգործական ընդհանուր միություն. հարյուրամյա պատմություն» (հատոր 1-2, համախմբագիր, 2006, անգլերեն), «Կիլիկիայի հայերը. բնակավայր, հիշողություն և ինքնություն» (համահեղինակ, 2012, ֆրանսերեն), «Օսմանյան հայերը. հատոր 1. կյանքը, մշակույթը, հասարակությունը» (2014, անգլերեն), «Ամենօրյա կյանքն անդունդում. Ցեղասպանության օրագրեր, 1915-1918» (2017, անգլերեն) հատորները:

Էլադա ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՄՈՌԱՆԱԿԻ ՀՈԳԵՎԱՐՔԸ


Ս/թ ապրիլի 24-ին Բեյրութում լույս տեսնող «Ազդակ» օրաթերթում Թամար Հովհաննիսյանը արժևորել է բանասիրական գիտությունների դոկտոր, «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր Անուշավան Զաքարյանի առաջաբանով ու ծանոթագրություններով հրապարակած հայ նշանավոր գրող, թարգմանիչ, հրապարակագիր, ազգային-հասարակական գործիչ Զապել Եսայանի «Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)» գործը: Բացի այդ, ընթերցողին է ներկայացրել ծավալուն հարվածներ գրքի առաջաբանից: Սրորն հրապարակում ենք Թ. Հովհաննիսյանի՝ արդիական հնչեղություն ունեցող խոսքը գրքի ու այն կազմողի մասին:

ԽՍԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողի սեղանին է վերջերս Երեւանում լույս տեսած Զապել Եսայանի «Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)» գիրքը, որը բացառիկ փաստավաւերագրական պատում է Հայոց ցեղասպանութեան մասին: Հրատարակութեան նախաձեռնողը, կազմողն ու յառաջաբան գրողը՝ անուանի մտաւորական Անուշավան Զաքարեանն է: Հատորը լոյս է տեսել Հայաստանի գիտութիւնների ազգային ակադեմիայի պատմութեան հիմնարկի հովանու ներքոյ:

Հայ ժողովրդի պատմութեան մէջ բացառիկ կին էութիւն է Զապել Եսայեանը: Հանրաճանաչ գրող, հրապարակագիր, թարգմանիչ, ազգային-հասարակական գործիչ, Արշակ Զոպանեանի բնորոշմամբ՝ «հայոց մեծագոյն գրագիտուհի» Զապել Եսայեանը իր համայն գրական եւ ազգային գործունէութեամբ ամուրանալի հետք է թողել մեր իրականութեան մէջ: Եւ չափազանց արժէքաւոր է մեր այս օրերում Անուշավան Զաքարեանի ազգանուր նախաձեռնութիւնը՝ հրատարակել Զապել Եսայեանի «Ժողովուրդի մը հոգեվարքը. Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ» ժողովածուն:

Նախ արդարացիօրէն արժէ հակիրճ ներկայացնել ընթերցողին այդ նախաձեռնողին: Բազմակողմանի է բանասիրական գիտութիւնների դոկտոր Անուշավան Զաքարեանի գրականագիտական եւ հասարակական գործունէութիւնը: Քսան մենագրութիւնների եւ կազմած ժողովածուների, նաեւ շուրջ 300 յօդուածների հեղինակ է, որոնց հիմնական ուշայարոյց միւթերն են. 20-րդ դարասկզբի առաջին քառորդ տաս-



նամեակների հայ իրականութեան խնդիրները, Հայկական հարցը եւ Հայոց ցեղասպանութիւնը: Նաեւ՝ հայ-ռուսական պատմականագրական կապերը: Իր գրական գործունէութեանը զուգընթաց, տարիների

ընթացքում Անուշավան Զաքարեանը յարգալից ճանաչման է արժանացել որպէս Հայաստանի գիտութիւնների ազգային ակադեմիայի հրատարակչութեան խմբագիր, այդտեղ լոյս տեսնող «Լրաբեր հասարակական գիտութիւնների» ամսագրի պատասխանատու քարտուղար, ՀՀ Գերագոյն խորհրդի քարտուղարութեան հրատարակչական բաժնի վարիչ, Ազգային ժողովի թարգմանչական-հրատարակչական ենթաբաժնի վարիչ, գրասենեակի ղեկավար, քարտուղարութեան պետի տեղակալ, նաեւ ՀՀ կառավարութեան աշխատակազմի «Պաշտօնական տեղեկագիր» ընկերութեան գործադիր տնօրէն: Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի համակարգում ունեցած վաստակի համար 2013 թ. պարգեւատրուել է «Վաստակագործ»:

Ունի նաեւ Հայաստանի Հանրապետութեան պետական ծառայութեան առաջին կարգի խորհրդականի աստիճան: Եւ ահա մեր ներկայիս ծանրագոյն, կրկին եղերական երանգով շնչող ժամանակում Անուշավան Զաքարեանը իր ազգային մոլորութեան մղումով ձեռնարկել է գրել ծաւալուն, վերլուծական բարձր մասնագիտական յառաջաբան եւ հրատարակել հայոց անմոռանալի եղեմին մուկուած վերոյիշեալ հատորը:

Ինչպէս գրել է Զապել Եսայեանը իր գրքի նախաբանում. «Կ'անցնին տարիներ, կը մոռացուին քաղաքական ռիւերը եւ ատելութիւնները, նոր մարդկութիւնը նոր յոյսերով եւ նոր ձգտումներով կը մոռնայ այսօրուան սուգը, բայց բան մը պիտի մնայ անդարմանելի եւ անմոռանալի, այն է՝ ամբողջ ժողովուրդի մը երկարածգուած եւ տանջալի հոգեվարքը, որուն անշուշտ մէկ տօգոյն պատկերը պիտի գտնէք այս գրքի էջերուն մէջ»: Եւ այդ անմոռանալիութեան վառ ապացոյցն է Անուշավան Զաքարեանի կազմած, հրատարակած եւ յառաջաբանած տուեալ ժողովածուն:

Թամար
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԽՍՀՄ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ

Կյանքի ամենօրյա լարվածության մեջ երբեմն որոշ կարևոր բաներ, որոնք հենց աչքիդ առաջ են, չես նկատում:

Բոլորովին վերջերս ուշադիր զննեցի աղջկաս դպրոցական տարիների դրոշմանիշների հավաքածուն, որը հա-



վաքել էր 1977-1980 թթ. ընթացքում: Նա դրանք զննել էր դպրոցական դասերից հետո մտնելով այն ժամանակ Լեմինի պողոտայի վրա գտնվող դրոշմանիշների մասնագիտացված խանութը: Առաջին անակնկալն այն էր, որ դպրոցական աղջիկը հավաքածուն կազմել էր խիստ թեմատիկ բաժանմամբ: Դրոշմանիշներում շեշտը դրված էր հատկապես համաշխարհային արվեստի գործերի վրա՝ անտիկ ժամանակներից մինչև մեր օրերը:

Իհարկե, հավաքածուի դրոշմանիշների մեծ մասը խորհրդային Միության նմուշներ էին, սակայն կային, այն էլ բավական շատ, լեհական, կուբայական, լատական, վիետնամական, հունգարական, ռումինական, հնդկական, բուլղարական, լիբիական, միդեռլանդական, ինչպես նաև ուրիշ երկրների դրոշմանիշներ:

Այդ հավաքածուում հիանալի ձևով



ներկայացված էին համաշխարհային արվեստի գլուխգործոցները, նշանավոր նկարիչների, քանդակագործների, գրողների ծննդյան հոբելյաններին նվիրված միավորները:

Ինձ համար մեծ անակնկալ էր դրոշմանիշների մեջ եղած հայկական մշակույթին վերաբերող նմուշները: Դրանք հավաքածուի մեջ առանձնացված էին, և Հայաստանը դրանցում պատկերված էր՝ սկսած ուրարտական ժամանակներից մինչև մեր օրերը:

1978-ին տպագրված դրոշմանիշի վրա երեքուկի Արին բերդից պեղված բրոնզե արձանն էր՝ մարդու գլխով, կենդանու մարմնով: Դրոշմանիշի վրա, բնականաբար ռուսերենով, գրված էր. «Երևան, Արին բերդ, բրոնզե արձան,



VIII դար մ.թ.ա.»:

1980-ին էր տպագրված հայ մեծագույն փիլիսոփային Դավիթ Անհաղթին պատկերող դրոշմանիշը: Այն նվիրված էր հայկական վաղ միջնադարի փիլիսոփա Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյա հոբելյանին, որը փառահեղ ձևով նշվել է ոչ միայն Հայաստանում, այլև հայագիտությամբ զբաղվող աշխարհի շատ երկրներում:


1978-ին էր տպագրվել Ծաղկաձորի երեք հրաշալի խաչքարերը պատկերող դրոշմանիշը, որի վրա գրված էր. «Ծաղկաձոր, խաչքարեր, XIII դար»:



Հուլիսի էր տեսնել Մարտիրոս Սարյանի՝ 1923-ին նկարած «Լեռներ» նկարը, որը հավանաբար հայտնի է ամեն մի կրթված հայի: Դրանում մեր հզոր լեռներն են, իսկ դրանց ստորոտում՝ աշխատասեր հողի մշակը, որը գութանով վարում է հողը:

Մարտիրոս Սարյանի ծննդյան 100-ամյակի առթիվ է թողարկվել Վարպետի վրձնած «Հին Երևանը» (1928թ.) նկարը:

Դրոշմանիշներից մեկն էլ նվիրված էր համաշխարհային Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին (1875-1957), որը ներկայացնում էր Մարտիրոս Սար-



յանի կերտած խորիմաստ ու սքանչելի դիմանկարը: Բնականաբար այդ դրոշմանիշը թողարկվել էր 1975-ին:

1974-ին թողարկվել էր Հովհաննես Զարդարյանի «Գարուն» նկարը, որը պատկերում է լեռնային երկրի ոչ միայն գունեղ ու ծաղկավետ գարունը, այլև ջրի կուժն ուսած երիտասարդ ու շքեղ արտաքինով հայ աղջկան:

Դրոշմանիշներից մեկն էլ ներկայացնում էր ներկայիս Հանրապետության հրապարակի կառավարական շենքը, որը հայկական ճարտարապետության գլուխգործոցներից է և թամանյանական հանճարով Ամիր ու Աղթամարի ճարտարապետությանն այնքան բնորոշ զարդաքանդակների ճիսությամբ է զարդարված:

Փաստորեն, այն ժամանակների հայ մտավորականները, Հայաստանի դեկավարությունը տերն են եղել մեր ազգային արժեքներին և դրանք ճաշակով ու նպատակային մատուցել են համայն աշխարհին:

Ժամանակի հեռավորությունից առավել որոշակի ես տեսնում, թե որքան գնահատված են եղել խորհրդային տարիներին հայ մշակույթն ու այն կերտող մտավորականները:

Անելիտա ԴՈՆԻՍԱՆՅԱՆ

Զգուշացե՛ք, գոյբիներ ե՛ս

Ձոնքիների մասին կան շատ պատմություններ, նրանք գերեզմանային վերապրուկներ են. նրանք, պարզապես, ուրվականներ են. նրանք անդրշիրմյան աշխարհի ներկայացուցիչներ են... Էլ ինչ ասես չեն պատմում նրանց մասին: Բայց. ահա, ֆրանսիական «Լյա ռե-շեր» գիտական հանդեսը անդրադառնալով այդ թեմային, թեև երկչու, բայց հաստատ նշում է, որ մենք գործ ունենք սովորական մարդկանց հետ, որոնց մտածողությունը բնությունից, կամ արհեստական ազդեցությունից այլաձև է, ուրիշ է: Ընդունված է նաև «զոմբի» անվանել անսիրտ, անհոգի մարդկանց, որոնք դաժան են, զուրկ մարդուն բնորոշ բարությունից, ուշադրությունից՝ ուրիշների, շրջապատի նկատմամբ: Իհարկե, ֆրանսիական հանդեսի հրապարակումը մեզ հիշեցնում է առավել ուշադիր լինել սեփական արարքների, ուրիշների նկատմամբ, հիշելով, թե արդյո՞ք մեր անտարբերությամբ կամ դաժանությամբ մենք ևս «ԶՈՍԲԻ» չենք դիմացի մի նկատմամբ: Իզո՞ր են մարդիկ ասում՝ «Մա մարդ չէ, մա հոգի չունի, մա պարզապես զոմբի է»:

Ֆրանսիացի գիտնականները կարծիք են հայտնում, որ նրանք մարդիկ են, որոնք իրենք իրենք չեն պատկանում և օժտված են այնպիսի հատկություններով, որոնք սովորական մահկանացուները չունեն: Նրանք աշխարհին մայուն են, աշխարհն ընկալում են իրենց իսկ ֆիքսած պատկերներով:

Սովորական մարդիկ ուրիշ, ավելի ճիշտ, կանխակալ վերաբերմունք ունեն նրանց նկատմամբ, թեև, ըստ մեր տեղեկությունների, չկան մարդիկ, որ հանդիպած լինեն նրանց.

- Սակայն, զգուշ- ասում են գիտնականները, որովհետև այդ էակներին պետք է չափազանց զգուշ մոտենալ, քանզի նրանց աշխարհը մեզ համար առեղծված է, անհայտ:

Սկսելով ուսումնասիրությունները և հետևությունները, որ անում են ֆրանսիացի գիտնականները, իրենց իսկ պնդմամբ, 100 տոկոսանոց ճշմարտություն համարել չի կարելի: Համոզված չեն անգամ, թե այն ինչ ասում են, արդյոք, պատրանք չէ:

Եվ, այնուամենայնիվ, գիտնականները շարունակում են ուսումնասիրությունները, չհավանելով, թե զոմբիների մասին իրենց պատկերացումը, բնութագիրը բացարձակ ճշմարտություն է: Բացառված չէ, անգամ, որ լինի սխալ: Բայց, այնուամենայնիվ, արդեն այն փաստը, որ զոմբիների առեղծվածը հետաքրքրում կամ զբաղեցնում է նաև գիտնականներին, խոսում է այն մասին, որ զոմբիների (ուրվականների, դաժանությամբ տոգորված անդրշիրմյան աշխարհից եկվորների) թեման արժանի է ուսումնասիրման և ոչ թե արհամարհանքի: Չէ՞ որ մեր շրջապատում էլ քիչ չեն մարդիկ, ովքեր արժանի են կրելու ԶՈՍԲԻ տիտղոսը:



ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՄԻՍՈՒՄ ՊԱՀՈՒՄ ԵՆ ՆԵԼՍՈՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ



Нельсон
Георгиевич
Степанян
1913-1944

Алексей
Тихонович
Севастьянов
1917-1942

Иван
Фёдорович
Шушин
1924-1943

ՌԴ Լենինգրադի մարզի Պրիոգերյան շրջանում մի ավան (Ստեփանյանսկոյե), մի լիճ և մի դպրոց կրում են Արցախի Շուշիի ծնունդ փառապանծ օղաչու, խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի անունը: Այս մասին վերջերս տեղեկացրել է Սանկտ Պետերբուրգի «Հայկական ազգային կենտրոն» հասարակական կազմակերպության կայքէ-

ջը: Դրանք գտնվում են նշված շրջանի Սևաստյանովո գյուղական վարչատարածքում, որի կենտրոնն Մուսանուն ավանում մահ կանգնեցված է հուշաքար խՍՀՄ երեք հերոսների, այդ թվում՝ մեր մեծ հայրենակցի անուններով:

Իսկ օգոստոսի 21-ին, ըստ Մուսյն կայքի հաղորդման, մարզի Լոնոնոսովյան շրջանի Լեյբաժե ավանում՝ Լենինգրադի

երկնքի պաշտպանների հուշահամալիրում, համդիսավոր բացվել են խՍՀՄ մեր լեգենդար հերոսի և Ռուսաստանի հերոս Անատոլի Լեբեդի կիսանդրիները: Բացման հանդիսությանը ներկաների թվում են եղել և խոսք ասել տվյալ վարչատարածքի ու շրջանի ղեկավարները, Լենինգրադի Ա. Պուշկինի անվան պետական համալսարանի ռեկտորը, հայկական համայնքային կառույցների ներկայացուցիչներ, այլ պատվավոր հյուրեր: Ելույթ ունեցողներից ՌԴ ռազմական գիտությունների ակադեմիայի անդամ, պրոֆեսոր, պահեստի գնդապետ **Վրեժ Զարուբյունյանը**, ներկայացնելով մասնավորապես Նելսոն Ստեփանյանի սխրամքները, նաեւ դատապարտող խոսքով հիշել է ինչպես ժամանակին Արցախի իր ծննդավայրում խորհրդային Միության մյուս կրկնակի հերոս, խՍՀՄ մարշալ Զովհան-նես Բաղդամյանի հուշարձանի, այնպես էլ Շուշիում այս հերոսի հուշարձանի ոչնչացումը ադրբեջանցիների ձեռքով:

Նույնի մասին հիշատակում կա նաև Լեյբաժե ավանի ղեկավարությանը Արցախի Զանապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար **Լուսինե Կարախանյանի** հղած մատակում: Զանդիսության ժամանակ այն

հասցեատերերին է հանձնել Սանկտ Պետերբուրգի Հայկական ազգային-մշակութային ինքնավարության խորհրդի նախագահ **Կարեն Սկրտչյանը**:

«Նելսոն Ստեփանյանը,- նախարարի շնորհակալական խոսքից հետո ասված է մամական,- ծնվել է Արցախի սրտում՝ աներական լեռնաշղթաների շուշի քաղաքում: Ու չնայած մահապարհ է ընդամենը 31 գարուն, սակայն արդեն կենդանության օրոք դարձել է լեգենդ, հայրենիքի պաշտպանի անկրկնելի օրինակ և թշնամիների սարսափ... Լենինգրադի մարզում հերոսին հուշարձանի կանգնեցումը Արցախի հայերիս համար մահ յուրատեսակ միսթարանք է հայրենի Շուշիում բոլորովին վերջերս մահ հուշարձանի բարբարոս ոչնչացումից հետո»: «Մենք համոզված ենք, որ աշխարհն ըստ արժանավույն կգնահատի մեծ հերոսի վաստակն ու մահ ավանդը ֆաշիզմի դեմ պայքարում: Եվ հերոսների հիշատակը կրկին կվերադառնա Շուշի որպես հուշարձան, որպես հրաշալի հիմն Զայրենիքին անմնացորդ նվիրվածության ու անձնագոհության», - խոսքը եզրափակել է արցախցի նախարարը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

Լույս է տեսել Պատմաբանասիրականի 2021-ի երկրորդ համարը

Լույս է տեսել «Պատմաբանասիրական հանդես»-ի (գլխավոր խմբագիր՝ Անուշավան Զաքարյան, գլխավոր խմբագրի տեղակալ՝ Ալեկսանդր Դուրխանյան) 2021թ. 2-րդ համարը: Այն սկսվում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի հինգերորդ՝ նորընտիր նախագահի և ակադեմիայի ղեկավար կազմի ընտրությունների մասին տեղեկատվությամբ: Համարը, հանդեսի ավանդույթին հավատարիմ, բաղկացած է «Հոդվածներ, հաղորդումներ», «Քննարկումներ», «Հրապարակումներ», «Գրախոսություններ», «Մեր հոբելյանները», «Գիտական կյանք», «Լրատու» բաժիններից:

Համարի առաջին հոդվածը Ալեկսանդր Դուրխանյանի «Միջազգային հռչակի տեր բյուզանդագետն ու հայագետը» վերտառությամբ հոդվածն է՝ գրված Նիկողայոս Արմենի ծննդյան 150-ամյակի առթիվ:

Համարի ուշագրավ հոդվածներից է Անուշավան Զաքարյանի «Օսիպ Մանդելշ-

տամ. բանաստեղծը և ժամանակը: Հայաստանը մահ կյանքում» վերնագրով հոդվածը՝ նվիրված բանաստեղծի ծննդյան 130-ամյակին: Ինչպես պարզվում է, Օսիպ Մանդելշտամի մասին մինչ այժմ հայերեն ամբողջական խոսք չի եղել, և միայն այս հոդվածով է շրջանառության մեջ դրվել նշանավոր ռուս բանաստեղծի կյանքն ու գործունեությունը՝ մեծամասամբ մահ կապված Հայաստանի ու հայ ժողովրդի հետ:

ՊԲԴ-ի՝ ներկայացվող համարի հետաքրքիր և մեր օրերին ամենօրյա հրապարակումներից է Արմեն Ասրյանի «Մեծ Բրիտանիայի հակահայ քաղաքականությունը Ղարաբաղի հարցում (1918-1920 թթ.) և արդի իրավիճակը» հոդվածը: Այն սկսվում է Առաջին աշխարհամարտից հետո Արևմուտքի, հատկապես Մեծ Բրիտանիայի՝ հայ ժողովրդի նկատմամբ գրաված դիրքի մասին սեղմ տեղեկությամբ: Այնուհետ բացահայտված են Մեծ Բրիտանիայի նպատակները տարածաշրջանում: Ներկայացված է Մեծ Բրիտա-

նիայի հակահայ քաղաքականությունը Ղարաբաղի հարցում՝ 1918-1920 թթ.:

Հանդեսի հետաքրքիր նյութերից է Սուսաննա Զովհաննիսյանի «Բանաստեղծի դուստրը. նորահայտ էջեր Հովհաննես Թումանյանի ընտանեկան արխիվից» հոդվածը: Հրատարակված հոդվածներից կուզեինք առանձնացնել մահ Վերծինե Սվազյանի «Նշխարներ Պյատիգորսկ գաղթած Արցախի հայերի բանահյուսության» (ըստ հեղինակի գրառած նյութերի) հոդվածը:

«Հոդվածներ, հաղորդումներ» բաժնում տեղ են գտել մահ Պետրոս Դեմիրճյանի «Եղիա Տեմիրճիպաշյան. բազմավաստակ գրողն ու մտավորականը» (Եղիա Տեմիրճիպաշյանի ծննդյան 170-ամյակի առթիվ), Գայանե Մախնուրյանի «Շուշի քաղաքի 1920 թ. մարտի 23-26-ի ողբերգությունը հայրենական և օտար պատմագրության մեջ» (ռուսերեն), Վահե Սարգսյանի «Վրաց Ուղղափառ եկեղեցու և Հայ Առաքելական եկեղեցու Վրահայոց թեմի իրավական

կարգավիճակի օրենսդրական կարգավորումը հետխորհրդային Վրաստանում», Դավիթ Գասպարյանի «Գեղարվեստի և պատմության սահմանագիծը (ըստ Համաստեղի «Սպիտակ ծիավորը» վեպի), Վաչագան Ավագյանի «Հայր Ղևոնդ Ալիշանի և Վաղիմիր Ստատիկի առնչություններից», Նարեկ Մարտիրոսյանի «Հողային հարցի լուծման ուղիներն ըստ օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների (1910-1912 թթ.)», Լալիկ և Լիլիթ Խաչատրյանների «Ածական//գոյական տարաբնույթ բառերի թվականությունը հին հայերենում» հոդվածներն ու հաղորդումները:

«Գիտական կյանք» բաժնում լուսաբանված է Պետերբուրգում սույն թվականի ապրիլի 27-28-ը տեղի ունեցած Սկրտչյ Արմենյանի և Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակներին նվիրված գիտաժողովը:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ

Հայաստանը համաշխարհային քարտեզի վրա ...

մոլեկուլային-գենետիկական, այնուհետև գենոմային մակարդակներով:

Համաշխարհային խաղողի քարտեզի վրա Հայաստանը՝ որպես խաղողի ծագման բնօրրան, ճանաչելի դարձնելու նպատակով 2018 թ. ՀՀ խաղողագործության և գինեգործության հիմնադրամի հետ համատեղ ստեղծվեց ՀՀ խաղողի գենետիկական ռեսուրսների տվյալների առաջին բազան՝ VITIS www.vitis.am կայքը, որը կցված է եվրոպական www.vivc.de և չինական www.vitisgdb.ynau.edu.cn տվյալների բազաներին:

Առաջին անգամ Հայաստանում ֆրագմենտային սեկվենավորման միջոցով գենոտիպավորվեցին 400-ից ավելի խաղողի մուշկներ, որոնց գերակշիռ մասը պահպանվում է ՀՀ խաղողի ազգային կոլեկցիոն այգում: Այս արդյունքները ստացվել են «Հայաստանի խաղողի գենետիկական ելանյութի բազմակողմանի բնութագրումը սելեկցիոն ներուժի բացահայտման նպատակով ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի և Գերմանիայի խաղողի սելեկցիայի ինստիտուտի մասնակցությամբ: Այժմ արդեն գենոտիպավորված են խաղողի շուրջ 1300 գենոտիպեր, ներառյալ վայրի խաղողի ավելի քան 200 մուշկներ:

2019 թ. ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը միացավ «Whole genome sequencing of global

Vitis accessions (4K)» (Vitis-ի գլոբալ մուշկների ամբողջական գենոմի սեկվենավորում) միջազգային մեգածրագրին՝ Չինաստանի ԳԱԱ և Յունանի համալսարանի նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ: Ծրագրի շրջանակներում ամբողջ աշխարհից հավաքագրվել են խաղողի շուրջ 5000 տարբեր սորտեր և վայրի գենոտիպեր, որոնց ամբողջական գենոմն արդեն ռեսեկվենավորվել է:

Ըստ ծրագրի արդյունքների՝ խաղողի հայկական պոպուլյացիայում հայտնաբերվել են գենոտիպեր, որոնք միջանկյալ ձևեր են վայրի և մշակովի խաղողի միջև, ինչը չափազանց կարևոր ֆենոմեն է էվոլյուցիոն տեսանկյունից կուլտուրականացման գործընթացն ուսումնասիրելու առումով: Ծրագրի արդյունքները կամփոփվեն 2022 թ.:


«Մեր բոլոր նախագծերի վերջնամպատակը Հայաստանում խաղողի գենետիկական ռեսուրսների պահպանումն ու հարակայուն խաղողագործություն զարգացնելն է,- ասաց ծրագրի գիտական խմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի Բույսերի գենոմիկայի գիտական խմբի ղեկավար, ավագ գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու Քրիստինե Մարգարյանը,- պետք է նվազագույն մակարդակի բերել կամ բացառել թունաքիմիկատների կիրառումը և վերականգնել քրիստիային սելեկցիոն աշխատանքները՝ ուղղված ռեգիստենտ սորտերի ստացմանը»:



Գիտնականը վստահ է, որ Հայաստանի խաղողի կենսաբազմազանությունն օժտված է այդ ներուժով և այս մոտեցումն ունի կարևոր բնապահպանական և առողջապահական նշանակություն:

Ծրագրերի գիտական արդյունքները Քրիստինե Մարգարյանը՝ որպես հրավիրված բանախոս, զեկուցել է ոլորտի գլխավոր միջազգային կազմակերպության International Organization of Vine and Wine, OIV-ի տարեկան գիտաժողովներին, սկսած 2016 թ., տպագրել հոդվածներ միջազգային պարբերականներում (VITIS, Genes, MDPI): Շուտով լույս կտեսնի մահ երկու ընդարձակ հոդվածներ Nature Plants և Biology, MDPI պարբերականներում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



Մատվեյ Մանիզեր, «Զուբակահար Զովհաննես Նալբանդյանի դիմաքանդակը», 1920թ.

20-րդ դարասկզբին ընթացավ երկու ճանապարհով՝ կատարողական և մանկավարժական՝ երկուսում էլ արժանագրելով ակնառու նվաճումներ:

Հովհաննես Նալբանդյանը՝ վիրտուոզ ջութակահար

Նալբանդյանի ստեղծագործական կյանքի կարևոր բաղադրիչն էր կատարողական գործունեությունը: Ժամանակակից ջութակահարներից քչերը կարող էին Նալբանդյանին հավասարվել համերգային ինտենսիվ գործունեության ասպարեզում: Ժամանակակիցների վկայությամբ՝ նա այն վիրտուոզներից էր, ում ազգանվանը ամեն շաբաթ կարելի էր հանդիպել համերգային հայտագրերի վրա: Երաժշտասերները նրան լավ ճանաչում էին ինչպես Պետերբուրգում, այնպես էլ Կիևում, Վիլնոյում, Ռիգայում, Բեռլինում, Թիֆլիսում, Բաքվում, Երևանում և այլուր:

Նալբանդյանն իր մշտական ունկնդիրը, իր ուրույն լսարանն ունեցող եզակի արտիստներից էր: Նրա համերգներին զնում էին հենց իրեն ունկնդրելու և ոչ թե նրա կատարմամբ տվյալ ստեղծագործությունները լսելու նպատակով: Վիրտուոզ ստեղծագործությունների կողքին ջութակահարը միշտ նվագում էր կամերային գործեր, ջութակի գրականության նորություններ. նա մրցակիցներ չունեցր ջութակի գրականության նորությունների ներկայացման ասպարեզում ևս:

Նալբանդյանի նվագն առանձնանում էր հնչյունի հրաշալի գեղեցկությամբ, վստահ և ճկուն տեխնիկայով,

գործությունները: Նրա նվագացանկում կարևոր տեղ էր գրավում ժամանակակից երաժշտությունը:

Հատուկ Նալբանդյանի համար են գրվել ու նրան նվիրվել Վիտոլի «Լատիշական ֆանտազիան», Ս.Լյապունովի Ջութակի և նվագախմբի կոնցերտը, Լ.Նիկոլաևի Սոնատը ջութակի և դաշնամուրի համար, Ա.Սպենդիարյանի Ջութակի և դաշնամուրի ռոմանսը, «Կանցոնետը», Պոգոժևի «Նոկտյուրնը», որոնց առաջին կատարողը հենց ինքն էր:

Մենակատար ջութակահարը հանդես է եկել նաև որպես հմուտ անսամբլիստ և պրոպագանդել կվարտետային երաժշտությունը:

Հարազատ մնալով աշխարհահռչակ ջութակահար-վիրտուոզների ավանդույթներին, Նալբանդյանը ևս ստեղծագործում էր և ջութակի համար գրած իր պիեսներով հանդես գալիս իր համերգների ընթացքում: Ցավոք, այսօր մեզ համար այդ ստեղծագործությունները մատչելի չեն. դրանց նոտաները չկան ԳԱԹ Հովհաննես Նալբանդյանի արխիվում, և դրանց մասին կարող ենք պատկերացում կազմել միայն ժամանակի մամուլի արձագանքներով: Նրա գործերից մեծ հաջողություն են ունեցել G-dur ռոմանսը, A-dur էտյուդը, «Արևելյան կապրիսը», «Le Tourment»-ը, G-dur պրելյուդը, G-dur էտյուդը, «Հեքիաթը» մենակատար ջութակի համար, Քայլերգը, Նոկտյուրնը, «Ֆանտազիան», «Mélancolic»-ը, «Orinetales»-ը...

Իր ողջ կյանքն ապրելով Ռուսաստանում և համարվելով Ռուսաստանի լավագույն ջութակահարներից մե-

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ - 150

Հայ առաջին խոշոր ջութակահարը

«Ով իմ մանուկ՝ հանձարեղ Յովհաննես, այսօր դու ինձ դիպեցիր, ինչպես կամ ինչով յայտնեմ քեզ այսօրվա իմ ստացած հոգեկան բաականությունը»:
Հովհաննես Այվազովսկի, 1898

Հրեյլյանագարդ է 2021 թվականը հայ երաժշտարվեստի համար: Սեպտեմբերի 15-ին լրացավ համաշխարհային բեմահարթակ բարձրացած հայ առաջին խոշոր ջութակահար, ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Հովհաննես Առաքելի Նալբանդյանի (15 սեպտեմբերի, 1871, Սիմֆերոպոլ - 23 փետրվարի 1942, Տաշքենդ) ծննդյան 150-ամյա հոբելյանը:

Պետերբուրգի կոնսերվատորիայում իր ուսումնառությունը Հ. Նալբանդյանը սկսեց ռուս ջութակահար, դիրիժոր և մանկավարժ Նիկոլայ Գալկինի դասարանում. երկու տարվա ընթացքում նա աճում է անճանաչելիորեն իր վրա հրավիրելով կոնսերվատորիայի դիրեկտոր Անտոն Ռուբինշտեյնի ուշադրությունը: Իր փայլուն հաջողությունների համար 1888 թվականին Նալբանդյանը տեղափոխվում է վիրտուոզ-ջութակահար, խոշոր մանկավարժ, դիրիժոր Լեոպոլդ Աուերի դասարան: Դեռևս ուսանողական տարիներին պրոֆեսոր Աուերը միշտ արտասովոր ջերմությամբ էր վերաբերվում Նալբանդյանին, մեծ ուշադրությամբ ու հոգատարությամբ նա բնագրաբար զգում էր այն պահերը, երբ Նալբանդյանը հոգեպես ընկճվում էր և երբ նրա համար շատ ծանր էր, ու ամեն կերպ աջակցում էր: Հաճախ էր հրավիրում իր տուն. նրա ընտանիքը Նալբանդյանին սիրում էր: Իսկ երբ արդեն Նալբանդյանը դասախոս էր ու նրա օգնականը՝ պրոֆեսորի և աշակերտի միջև գոյություն ունեցող սահմանը վերացավ, և նրանք դարձան լավ բարեկամներ: «Ես պիտի այդ բոլոր՝ 17 տարիների ընթացքում, շաբաթը երկու անգամ ճաշեի նրա մոտ, իսկ հետո երեկոները մենք նվիրում էինք երաժշտության մասին զրույցներին: Հաճախ և գրեթե միշտ ինձ հաջողվում էր խնդրել նրան ջութակ նվագել և խաղաղ իրադրության մեջ հանգիստ նստած լսելով նրան՝ ես շատ բան սովորեցի այդ խոշոր ջութակահար-արվեստագետից և ինձ՝ որպես իր օգնականի, իր դասարանում պարապելու հնարավորություն ընձեռելով՝ ինձ հսկայական օգուտ տվեց. սովորեցնելով ուրիշներին ես շատ բան սովորեցի: Եվ որպես արտիստ, և՛ որպես պրոֆեսոր-մանկավարժ ես շատ բանով եմ պարտական Աուերին, և իմ ուսուցչի հանդեպ ջերմ երախտագիտությունը միշտ կապրի իմ մեջ», - հետագայում կիսոստովանի Նալբանդյանը՝ 1913 թվականին գրված իր ինքնակենսագրության մեջ: Նալբանդյանի արխիվում են գտնվում իր ուսուցչի՝ իրեն հասցեագրված ռուսերեն ու գերմաներեն մամակներն ու բացիկները, որոնք ուղարկվել են 1897-ից մինչև 1923 թվականը Կիևից, Փարիզից, Յալթայից, Մյունխենից, Դյուսելդորֆից, Քյոնիգսբերգից, Բեռլինից, Լոնդոնից, Գրեզդենից, Նյու Յորքից... Նալբանդյանն Աուերի ամենասիրելի աշակերտն էր ու օգնականը:

Տաղանդավոր ջութակահար և հմուտ մանկավարժ Հ. Նալբանդյանի գործունեությունը 19-րդ դարավերջին և



կատարման փայլով ու բազմազան տեխնիկայով, ցայտուն ֆրագավորմամբ: Ընդ որում՝ աջ և ձախ ձեռքերի տեխնիկան նրա մոտ զարգացած էր հավասարապես: Ու թեև նա միշտ հաղթահարում էր տեխնիկական դժվարությունները, այնուամենայնիվ՝ նրա նվագն ունկնդիրն գրավում էր ոչ այնքան վիրտուոզությամբ, որքան՝ կանտիլենայով: Նա իսկական արտիստ էր և ոչ թե լոկ վիրտուոզ:

Նալբանդյանի՝ դասական ստեղծագործությունների լավագույն մեկնաբաններից մեկի, նվագացանկում էին Բախի d-moll կոնցերտը երկու ջութակի համար, Բախի N 2 կոնցերտը, Սոնատի ջութակի և նվագախմբի N 6 Es-dur կոնցերտը, Սենդելսոնի, Պ.Չայկովսկու (ի դեպ՝ Չայկովսկու կոնցերտը կոնսերվատորիայի պատերի ներսում առաջինը ինքն է նվագել), Ա.Գլազունովի ջութակի կոնցերտները, Վիյոտանի ջութակի N 2, N 4 և N 5 կոնցերտները, Շպորի ջութակի 8-րդ կոնցերտը, Բրուխի Երկրորդ կոնցերտը, Իվանովի կոնցերտը, Ա.Ռուբինշտեյնի ջութակի սոլ մաժոր կոնցերտը, Պազանինի D-dur կոնցերտը, Յու.Կոնյուսի e-moll կոնցերտը...

Մի առանձին սիրով է Նալբանդյանը կատարել Սարասատեի, Յոախիմի և Վենյավսկու ստեղծագործությունները:

Մյուս կողմից՝ Նալբանդյանը, տուրք չտալով ունկնդրի ճաշակին, հաճախ էր նվագում այս կամ այն սուբյեկտիվ պատճառներով սակավ հնչող ստեղծագործությունները, այդ թվում՝ Բրամսի Սոնատը դաշնամուրի և ջութակի համար, Հունամի լյա միմոր սոնատը և այլն:

Նա կատարում և անդուլ պրոպագանդում էր ռուս, արևմտաեվրոպական և հայ կոմպոզիտորների ստեղծա-

կը, Նալբանդյանը հավատարիմ էր իր հայկական արմատներին: Ջութակահարը բազմիցս մասնակցել է բարեգործական համերգներին:

Պետերբուրգում տեղի ունեցած իր անդրանիկ ինքնուրույն համերգին՝ 1897 թվականի հունվարի 31-ին, «Ամվերջ bis-երից յետոյ, պ. Նալբանդյանը նուազեց «Կռնկ»-ը, որը ընդունուեց մեծ ոգևորութամբ: Չենք կարող չարձանագրել այն փաստը, որ պ. Նալբանդյանը ձրի բաժանեց մօտ 50 տոմսակ հայ ուսանողներին, հասուցանելով այդպիսով նրանց մեծ բավականություն» (տես Ռ. Յ., «Արձագանք», N16, 9 փետրվարի, 1897): Օրեր անց՝ փետրվարի 28-ին, գերմանական եկեղեցում կարիքավոր հայերի օգտին կազմակերպված հոգևոր համերգի ժամանակ Նալբանդյանը, հայ ժողովրդի դժբախտ վիճակի մասին մտքերով տարված, Ալեսանդրո Ստրադելլայի «Արիան» մենակատար ջութակի համար նվագում է այնպես, ասես «ջութակով տառաջիտեն հեկեկաց Ստրադելլայի «Արիան»:

Տարիներ կանցնեն, և արձագանքելով Հայոց մեծ եղեռնի ողբերգական իրադարձություններին, 1916թ. հունվարի 18-ին Պետերբուրգի կոնսերվատորիայի փոքր դահլիճում տեղի ունեցած իր համերգի ողջ հասույթը ջութակահարը կտրամադրի հայ փախստականներին: Պատերազմին մասնակցած հայ չքավոր ընտանիքներին օգնության ընկերությանը և ռազմական գործողություններից տուժած և աղքատության մեջ գտնվող հայ ազգաբնակչությանը կուղղվի 1916թ. նոյեմբերի 22-ին կոնսերվատորիայի փոքր դահլիճում Նալբանդյանի համերգի ողջ հասույթը ևս...

Հովհաննես Նալբանդյանը՝ մանկավարժ

Պետերբուրգի կոնսերվատորիան ավարտելուց հետո Հ. Նալբանդյանը 47 տարի դասավանդեց հարազատ կրթօջախում: Նրա մանկավարժական գործունեության շնորհիվ կապ ստեղծվեց ջութակի կատարողական առևտրյան և սովետական դպրոցների միջև: Նալբանդյանը, իր սաների վկայությամբ, բարյացակամ, զգայուն և ուշադիր ուսուցիչ էր: Լինելով Աուերի վաղ շրջանի սաներից մեկը, նա ուսանողների մեջ ձևավորում էր անհատականություն՝ իր ուշադրությունը սևեռելով նրանց անհատական որակների և ընդունակությունների վրա: Տասնամյակների ընթացքում նա կրթեց մենակատար ջութակահարների, անսամբլիստների, նվագախմբային արտիստների և մանկավարժների մի քանի սերունդներ: Որպես Լ. Աուերի օգնական՝ Նալբանդյանն Աուերի դասարանի համար նախապատրաստեց ամերիկյան ջութակահար Միշա Էլմանին, ամերիկյան ջութակահար, կոմպոզիտոր և մանկավարժ Եֆրեմ Ցիմբալիստին, Պետերբուրգի կոնսերվատորիայի առաջին արտասահմանցի սան, հետագայում կանադացի ջութակահար Կետլին Պարլոուին, ամերիկյան ջութակահար, կոմպոզիտոր և մանկավարժ Իսսիֆ Ախրոմին և այլոց:

(շարունակելի)

ԱՆՆԱ ԱՍՍՏՐՅԱՆ
 Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր



Հայրենի եզերք

Էդվարդ Վարդանի ՉՈՒԲԱՐՅԱՆ

Կյանքից հեռացել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Էդվարդ Չուբարյանը

2021 թ.-ի սեպտեմբերի 17-ին 85 տարեկան հասակում կյանքից հեռացել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Երևանի պետական համալսարանի Գուրգեն Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի ամբիոնի պատվավոր վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդվարդ Վարդանի Չուբարյանը:


Էդվարդ Չուբարյանը ծնվել է 1936 թ.-ի մայիսի 5-ին Սպիտակ քաղաքում: 1958 թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանը, 1973 թ.-ին ստացել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի կոչում, 1975 թ.-ին՝ պրոֆեսորի: 1996 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 1991-2006 թթ.-ին աշխատել է ԵՊՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, իսկ 2006-2013 թթ.-ին՝ ԵՊՀ Գուրգեն Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ: 2013 թ.-ից նույն ամբիոնի պատվավոր վարիչն էր:

Էդվարդ Չուբարյանի գիտական հետազոտությունների բնագավառն ընդգրկում էր գրավիտացիայի էյնշտեյնի և այլընտրանքային տեսությունները, գերխիտ երկնային մարմինների ֆիզիկան, սպիտակ թզուկների և նեյտրոնային աստղերի կառուցվածքը:

Էդվարդ Չուբարյանն արժանացել է ՀՍՄՀ Լենինյան Կոմերիտ-միության մրցանակի «Առանցքահամաչափ դաշտերը էյնշտեյնի գրավիտացիոն տեսությունում» աշխատանքի համար, Խաչատուր Աբովյանի մեդալի, ԵՊՀ-ի ոսկե մեդալի, Ֆ. Նանսենի մեդալի և ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ կոչման:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կոլեկտիվը սգում է ակադեմիկոս Էդվարդ Չուբարյանի մահը և ցավակցում նրա հարազատներին, բարեկամներին ու գործընկերներին:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղերի համար

1. Բջջային տեխնոլոգիաների լաբորատորիայի վարիչի

2. Հակավիրուսային դեղամիջոցների հայտնաբերման լաբորատորիայի վարիչի

3. Մոլեկուլային նյարդակենսաբանության խմբի ղեկավարի

4. «ՔԵՆՂԼ» սինթետիկային հետազոտությունների ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի համատեղ «Փորձարարական կենսաբանության» լաբորատորիայի վարիչի

Մրցույթին կարող են մասնակցել համապատասխան ոլորտում գիտական գործունեության փորձ և հրապարակումներ ունեցող անձինք:

Ամիսըստ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում ՄԿԻ-ի տնօրենի անունով,

բ) անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,

գ) երկու լուսանկար, 3X4 չափի,

դ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

ե) ինքնակենսագրություն

զ) բարձրագույն կրթության վկայականի պատճեն,

է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հաստատող փաստաթղթերի պատճենները,

ը) տպագրած գիտական աշխատությունների ցանկը

Ամիսըստ է փաստաթղթերը պետք է ներկայացնել ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի գիտական քարտուղարին՝ սույն հայտարարությունը հրապարակելու օրվանից մեկ ամսվա ընթացքում: Հասցե՝ Երևան, Հասարակայնի 7, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ, հեռ.՝ 28-16-26:

ՀՀ ԳԱԱ Էկոլոգիա և Բնական ռեսուրսների կենտրոն (ԷԲԿԵՆԿԵՆՏՐՈՆ) ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղերի համար

1. Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի և հեռազննման բաժնի ղեկավար,

2. Կենսաէներգետիկայի և կերի որակի բաժնի ղեկավար,

3. Սննդային շղթաների ռիսկի գնահատման տեղեկատվական և վերլուծական կենտրոնի ղեկավար,

4. Ռադիոէկոլոգիայի բաժնի ղեկավար:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, ովքեր ունեն գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, համապատասխան ոլորտին վերաբերող գիտական տպագրություններ՝ այդ թվում միջազգային գրախոսվող ամսագրերում և առնվազն 10 տարվա գիտական գործունեության փորձ:

Ամիսըստ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված Էկոլոգիայի տնօրենին,

բ) անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,

գ) երկու լուսանկար, 3X4 չափի,

դ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

ե) քաղվածք աշխատանքային գրքույկից,

զ) ինքնակենսագրություն

է) բարձրագույն կրթության վկայականի պատճեն,

ը) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հաստատող փաստաթղթերի պատճենները,

թ) տպագրած գիտական աշխատությունների ցանկը

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերը ներկայացնել ՀՀ ԳԱԱ Էկոլոգիա և Բնական ռեսուրսների կենտրոնի գիտական քարտուղարին՝ սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում՝ աշխատանքային օրերին, ժամը՝ 9:00-ից 13:00:

Հասցեն ք. Երևան, Արմյան 68, հեռախոս՝ 010 572-924, բջջային՝ 055 933-556:

«ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ բաժնի վարիչների և գիտական խմբերի հետևյալ թափուր պաշտոնների համար

Վաղ Հայաստանի հնագիտության բաժնի վարիչ

Հին Հայաստանի բաժնի վարիչ

Միջնադարյան Հայաստանի բաժնի վարիչ

Վիճակագրության բաժնի վարիչ
Ազգագրության բաժնի վարիչ
Արդիականության ազգաբանության բաժնի վարիչ

Եթնո-սոցիոլոգիայի բաժնի վարիչ
Բանահյուսության տեսության և պատմության բաժնի վարիչ

Բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչ

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
Արխիվի վարիչ

«Կիրառական ազգագրություն» գիտահետազոտական խմբի ղեկավար

Արցախի պատմա-մշակութային ժառանգության ուսումնասիրության գիտահետազոտական խմբի ղեկավար

Նորակառույցների հնագիտության խմբի ղեկավար

Մրցույթի պայմաններին կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության կայք էջում՝ iae.am կամ դիմել ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ, պ.գ.թ. Ա. Բոբոխյանին:

Ամիսըստ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում,

2. երկու լուսանկար՝ 3x4 չափի,

3. քաղվածք աշխատանքային գրքույկից,

4. ինքնակենսագրություն,

5. անձնագրի պատճեն,

6. գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն,

7. կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

8. վերջին 10 տարում հրատարակած աշխատանքների ցանկը՝ հաստատված համապատասխան կարգով,

9. բնութագիր վերջին աշխատանքի վայրից:

Դիմումներն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում: Դիմումները համապատասխան փաստաթղթերով ներկայացնել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի (տնօրենի տեղակալ Ա. Բոբոխյանին, բացի շաբաթ և կիրակի օրերից) հետևյալ հասցեով՝ Չարենցի 15, հեռ. (010) 556896:

ՀՀ ԳԱԱ «Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի վարիչի թափուր տեղի համար:

Դիմողը պետք է ունենա գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ ղեկավարելու ունակություն:

Ամիսըստ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,

բ) լուսանկար,

գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,

դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն,

զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն,

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,

թ) հրատարակված աշխատանքների ցանկ,

ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),

Ճ) բնութագիր վերջին աշխատանքից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56-36-37:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ,
հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268,

գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝

24.09.2021 թ.:

"ГИТУТИОН" ("Hayka") газета НАН РА